ք.Երևան «10» հոկտեմբերի 2022թ.

«ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «EASY WALLET» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ԱԿՑԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի կանոնադրության 8.15 կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի հոկտեմբերի 20-ից դեկտեմբերի 20-ը ներառյալ անցկացնել խրախուսական ակցիա «Իզի Փեյ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) «EasyWallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի համար՝ ի ապահովում էլեկտրոնային դրամապանակի տիրույթում գործարքների քանակի ավելացումը խրախուսելուն:
2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված ակցիայի պայմանները հաստատել սույն հրամանի հավելվածով:
3. Սույն հրամանը գործում է գործում է մինչև դրանով սահմանված գործընթացների ամբողջական կատարումը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ընկերության կոմերցիոն տնօրենին:

Տնօրեն Մ.Գաբրիելյան

Հավելված

«Իզի Փեյ» ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 2022/027 հրամանի

«EasyWallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի համար անցկացվող խաղարկոնթյան կանոններն ու պայմանները

1.1. Սույն կանոններով կարգավորվող ակցիան (այսուհետ՝ Ակցիա) «Իզի Փեյ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից կազմակերպվող **«Easy Wallet»** ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային դրամապանակ) օգտատերերի համար անցկացվող ծրագիր է, որը նպատակ ունի խրախուսել նույնականացված օգտատերերի քանակը, նրանց կողմից էլեկտրոնային դրամապանակով վճարումների կատարումը և այդպիսով ընդլայնել **«Easy Wallet»** ԷՎՀ իրացվելիության մակարդակը և օգտատերերի շրջանակը:

1.2. Սույն կանոններով սահմանվում են էլեկտրոնային դրամապանակի բջջային հավելվածը ներբեռնած, գործարկած, ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով նույնականացված օգտատերերի (այսուհետ նաև՝ Օգտատերեր) կողմից էլեկտրոնային դրամապանակում գրանցված հաշվառման հաշվի տիրութից (այսուհետ՝ Հաշվառման հաշիվ) էլեկտրոնային դրամապանակի ծառայությունների ծավալում ներառված ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի մարմանն ուղղված վճարումների բոլոր գործարքները մասնակցում են խաղարկության:

1.3. Սույն հրամանի 1.2 կետով սահմանված խաղարկությանը (այսուհետ՝ Խաղարկություն) մասնակցում են էլեկտրոնային դրամապանակի Հաշվառման հաշվի միջոցով 5,000 /հինգ հազար/ ՀՀ դրամից ավելի գումարի չափով հերթական մարման պարտավորությամբ էլեկտրոնային դրամապանակի ծառայությունների ծավալում ներառված ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի վճարմանն ուղղված բոլոր գործարքները: Սույն կետի իմաստով Խաղարկության մասնակցության համար վարկի մարմանն ուղղված վճարման գործարքի գումարի չափը պետք է լինի առնվազն 5,000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

1.4. Խաղարկության համար սույն հրամանի 1.2 կետով սահմանված գործարքների կատարման ժամկետ է հանդիսանում 2022 թվականի հոկտեմբերի 20-ից 2022 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

1.5. Խաղարկության մասնակցության համար համապատասխանող յուրաքանչյուր գործարքի կատարման պահին անմիջապես ձևավորվում է տվյալ գործարքի նույնականացման համար, որն էլ հաջորդիվ հանդիսանում է Խաղարկությանը մասնակցող գործարքը կատարող Օգտատիրոջ Հաշվառման հաշվի նույնականացման ցուցիչ: Սույն կետով սահմանված գործարքի նույնականացման համարները պահպանվում են և տեսանելի են նաև Հաշվառման հաշվի համապատասխան բաժնում:

1.6. Խաղարկությունը նախատեսվում է անցկացնել 2022 թվականի դեկտեմբերի 26-ին Ընկերության ֆեյսբուքյան պաշտոնական էջով «կենդանի հեռարձակման» ձևաչափով: Խաղարկության անցկացման ժամի մասին տվյալները ենթակա են հրապարակման Խաղարկության անցկացման օրվանից առնվազն 21 /քսանմեկ/ օրացուցային օր առաջ Ընկերության կայքի և/կամ սոցիալական կայքերում գործող պաշտոնական էջերի և/կամ Հաշվառման հաշիվների տիրույթում համապատասխան «push» տեսակի կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով:

1.7. Սույն կանոնների 1.6 կետով սահմանված պայմանները գործում են նաև Խաղարկության օրվա և/կամ ժամի փոփոխության դեպքում՝ բացառությամբ Ընկերության օբյեկտիվ հսկողությունից դուրս տեղի ունեցող իրավիճակների, որոնց դեպքում Խաղարկության օրը և/կամ ժամը կարող են փոխվել առանց սույն կանոնների 1.6 կետով սահմանված պայմանների պահպանման:

1.8. Խաղարկությունն անցկացվում է ուղիղ եթերում թափանցիկ միջին չափսի պտտվող տուփից սույն կանոնների 1.5 կետով սահմանված գործարքների նույնականացման համարները պարունակող փակ թղթերի պատահական ընտրության միջոցով:

1.9. Խաղարկությանը հաղթող ճանաչվող Հաշվառման հաշվի շահում է հանդիսանում Խաղարկությանը շահող գործարքի գումարի չափի վեցապատիկի չափով գումարը, սակայն ոչ ավելի 300,000 /երեք հարկուր հազար/ ՀՀ դրամից, որը հաշվեգրվելու է Հաշվառման հաշվի «EasyCoin» բաժնում միավորների ձևով ամսական պարբերականությամբ հերթական 6 /վեց/ ամիսների ընթացքում:

1.10. Սույն կանոնների 1.9 կետի իմաստով՝ Խաղարկությանը շահող ճանաչված գործարքի գումարի չափով գումար Խաղարկության անցկացման օրվան հաջորդող 6 /վեց/ ամիսների ընթացքում, մինչև յուրաքանչյուր հերթական ամսվա 7-րդ աշխատանքային օրը, շահող հանդիսացող Հաշվառման հաշվի «EasyCoin» բաժնում հաշվեգրվում են Խաղարկությանը շահող գործարքի գումարի չափով միավորներ: Ընդ որում, եթե Խաղարկությանը շահող գործարքի գումարի չափի վեցապատիկի չափով գումարը գերազանցում է 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը, ապա շահումի չափ է հանդիսանում սույն կետով սահմանված առավելագույն գումարը՝ 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը, որն էլ հավասար չափերով հաշվեգրվում է միավորների ձևով սույն կետով սահմանված պարբերականություններով Խաղարկությանը շահող հանդիսացող Հաշվառման հաշվի «EasyCoin» բաժնում:

1.11. Խաղարկությանը հաղթող Հաշվառման հաշիվների առավելագույն քանակը թվով 50 /հիսուն/ է:

1.12. Խաղարկությանը հաղթող ճանաչվող թվով 1 /մեկ/ Հաշվառման հաշվի շահումի առավելագույն չափը 300,000 /երեք հարկուր հազար/ ՀՀ դրամն է:

1.13. Սույն կանոններով սահմանված «Easy Coin» միավորներով արտահայտված շահումները համապատասխանում են 1 /մեկ միավորին 1 /մեկ/ ՀՀ դրամ պայմանին:

1.14. Խաղարկությանը մասնակցում են բացառապես կատարված և հաստատված գործարքները, այսինքն վարկի մարման վճարում կատարելու փորձ հանդիսացող, ինչպես նաև ցանկացած պատճառով մերժված կարգավիճակով գործարքները չեն մասնակցում Խաղարկությանը:

1.15. Խաղարկությանը չեն մասնակցելու Ընկերության աշխատողների, ինչպես նաև Ընկերությանը քաղաքացիաիրավական պայմանագրերի հիմքով առանձին ծառայություններ մատուցող անձանց Հաշվառման հաշիվները:

1.16. Խաղարկության մասնակցության ընթացքում վարկեր տրամադրող լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունների կողմից տվյալ վճարումների նկատմամբ առանձին պայմանների կիրառման դեպքում դրանք կարող են կիրառվել նաև Ընկերության կողմից Խաղարկության պայմանների ծավալում:

1.17. Խաղարկության ընթացքում Էլեկտրոնային դամապանակի միևնույն Հաշվառման հաշվի կողմից շահումների քանակի սահմանափակում չի գործում:

1.18. Խաղարկության շրջանակներում ստացած միավորները վավեր են նաև Խաղարկության ավարտից հետո:

1.19. Սույն կանոնները կարող են միակողմանիորեն փոփոխվել Ընկերության կողմից՝ խմբագրված

տարբերակը Ընկերության պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում գործող պաշտոնական էջերում հրապարակելու կամ համապատասխան հղմամբ ներկայացվելու միջոցով:

1.20. Սույն կանոնները և նկարագրված բոլոր գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Կողմերի միջև առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել իրավասու դատարանի քննությանը կամ Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում՝ արտոնագրված հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը:

1.21. Սույն կանոնները և մրցույթը գործում են սույն կանոնների 1.6 կետում նշված վերջնաժամկետի և սույն կանոնների 1.10 կետով սահմանված հաշվեգրման առավելագույն ժամկետների հաշվարկով: